Մրցույթի հայտարարությունը

«Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) հայտարարում է Տեքստային հաղորդագրությունների ուղարկման գործընթացի կազմակերպման ծառայությունների մատուցման բաց մրցույթ:

Մրցույթի առարկայի նկարագրությունը՝

Օպերատորների միջոցով ռեալ ժամանակում SMS-հաղորդագրությունների գրանցման, ձևավորման և ուղարկման, ինչպես նաև դրանց հասցեագրման հաջողման վերաբերյալ հաղորդագրությունների ստացման ծրագրային ապահովում:
Պատվիրակվող SMS-հաղորդագրությունների շրջանակը և ծավալը (ամբողջական/մասնակի կամ միայն որոշ տեսակի) կհստակեցվի Ընկերության կողմից մրցույթի ավարտից հետո:

Մրցույթին մասնակցելու պայմանները և պահանջները՝

Հաղորդագրությունների նկատմամբ պահանջները՝

1. *Հաղորդագրությունների տեսակները.*

1)	Ավտոմատացված / Տրանզակցիոն
2)	Գովազդային / Մարքեթինգային
3)	Միջազգային

2. *Ուղարկման մոդելը.*

Կասկադային

1)	Առաջնային	Մեսենջեր (Viber/WhatsApp/Telegram)
2)	Երկրորդային	Հեռախոսահամար

3. *Հաղորդագության երկարությունը.*

1)	160 նիշ	լատինատառ
2)	74 նիշ	հայերեն յունիկոդ տառատեսակով

4. *Տվյալների պահպանման նկատմամբ պահանջները.*

Տեղեկատվության գաղտնագրման անվտանգության անպիսի միջոցների կիրառում, որոնք թույլ կտան հավաստիանալ, որ Ընկերության կողմից փոխանցվող տվյալներին որևէ այլ 3-րդ անձ, այդ թվում՝ ծառայություն մատուցող կազմակերպության աշխատակիցները, որևէ տեսակի հասանելիություն չեն կարող ունենալ:

5. *Հաշվետվողականություն.*

Մատուցված ծառայությունների և ուղարկվող հաղորդագրությունների վերաբերյալ Ընկերության պահանջով պարբերական հաշվետվությունների ներկայացում:

6. Ընկերությանը այնպիսի համակարգի կառավարման մոդուլի տրամադրում, որտեղ հնարավոր կլինի ռեալ ժամանակի ռեժիմում հետևել հաղորդագրությունների ընթացքին և անհրաժեշտության դեպքում՝ կատարել կարգաբերումներ։

Մատակարարի նկատմամբ պահանջները՝

- Տեքստային հաղորդագրությունների ուղարկման գործընթացի կազմակերպման ծառայություններ մատուցման առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ։
- Ծառայությունից օգտվող առնվազն 5 հաճախորդների ցանկի ներկայացում։
- Տեղեկատվական անվտանգության որակի սերտիֆիկացման առկայություն։

Մրցույթի պայմանների և պահանջների մանրամասների հետ ծանոթանալու կարգը և ժամկետները՝

Մրցութային փաթեթը պարտադիր պետք է պարունակի՝

- Ծառայությունների մատուցման արժեքը ՀՀ դրամով՝ ներառյալ ԱԱՀ (1 հաղորդագրության արժեքը յուրաքանչյուր տեսակի հաղորդագրության համար ըստ Օպերատորների և ըստ ուղղությունների) և վճարման պայմանները։
- Պետական ռեգիստրից կամ Բաժնետերերի ռեեստրից քաղվածք, որտեղ արտացոլվում է կազմակերպության մասնակիցների/իրական շահառուների վերաբերյալ տեղեկատությունը։

Մրցութային առաջարկները պետք է ներկայացվեն ք. Երևան, Մ.Խորենացու փողոց 15 շենք («Էլիտ Պլազա» բիզնես կենտրոնի շենք, 8-րդ հարկ) հասցեով, փակ ծրարով կամ Էլեկտրոնային կրիչով։

Մրցութային առաջարկների ներկայացման վերջնաժամկետն է 14.10.2024թ՝ ժամը 17.00-ն։

Սույն մրցույթ հայտարարողն իրավունք ունի մինչև առաջարկներն ամփոփելը ցանկացած պահին դադարեցնել մրցույթի անցկացումը և առանց որևէ պարզաբանման հրաժարվել բոլոր ստացված հայտերից՝ չկրելով որևէ պատասխանատվություն մասնակիցների առջև։

Լրացուցիչ տեղեկությունների և պարզաբանումների համար կարող եք զանգահարել +374 10 59 22 11 (ներքին՝350) հեռախոսահամարով կամ թողնել հաղորդագրություն tender@arca.am էլեկտրոնային հասցեին։